

Մ Շ Ա Կ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկի.
Տ է Լ է Ֆ Օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ Գ Ի Դ Գ Ի Ն Ի Ա Ր Ծ Ի Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Զառանցանքների մէջ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Նամակ Փոփից. Նամակ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—
ՀՆՈՒԱԳԻՆՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՍԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ:

ԶԱՌԱՆՑԱՆՔՆԵՐԻ ՄԷՋ

Բաղդադի երկաթուղին զանազան ցը-
նորներ և ծիծաղելի յայտեր է զարթեց-
րել մահմեդական աշխարհում. Կ. Պոլսի
թիւրք չհապարակախօսները կարծում են,
որ այդ երկաթուղու միջոցով բարոյական
կապ է հաստատվում մահմեդական երկու
մեծ պետութիւնների, այն է Թիւրքիայի
և Պարսկաստանի մէջ և որ մահմեդա-
կանների ընդհանուր միութեան համար
այդպիսով պատրաստվում է մի մեծ և
զորաւոր շղթայ: Այն, ինչ որ զարկերի
ընթացքում անկարելի է եղել իրապէս,
այն է Պարսկաստանի և Թիւրքիայի մէջ
մտերիմ բարեկամութիւն հաստատելը, այ-
ժմ Կ. Պոլսի քաղաքագետներին թւում
է ոչ միայն իրագործելի, այլ և ապագայ
ծրագիրների համար իբրև մի անհրաժեշտ
պայման, որ պէտք է փրկի մահմեդակա-
նութիւնը անկումից:

Իսկ մի զառանցանք է, որի մէջ ընկել
են մահմեդականութեան ներկայացուցիչ-
ները, իրանց մտածմունքները և յայտերը
կենտրոնացնելով այնպիսի ծրագրերի վրա,
որոնք չեն կարող որ և է լուրջ գործ-
նական նշանակութիւն ստանալ և չեն
պարունակում իրանց մէջ շօշափելի և ի-
րական օգուտներ նոյն իսկ մահմեդական
ժողովուրդների համար: Բաղդադի եր-
կաթուղին իսկապէս կը կապի Պարսկա-
ստանը Թիւրքիայի հետ, իսկ աւելի ըն-
դարձակ մտքով կը կապի Հնդկաստանը
և Հնդկական Աֆրիկան: Եւրոպայի հետ.
բայց այդ կապը կարտադրի բոլորովին
ուրիշ հետեւանքներ, քան սպասում են
թիւրք քաղաքագետները: Նա կը ստեղծի
ազգերի արդիւնագործական շփման հա-
մար մեծ ասպարէզներ, նա կը միացնի
հեռաւոր տեղերի մարդկանց՝ ընդհանուր
կուլտուրական գործունէութիւն հաստա-
տելու համար. նա կը ջանքատէ կրօնա-
կան և ամեն տեսակ կղզիացումները և ոչ
մի կերպ չէ կարող նպաստել, որ մահմե-
դականութիւնը գեւա աւելի ևս կազմա-
կերպվի բրիտանականութեան դէմ մրցութիւն
և մարտաւում մղելու համար:

Ցաւալի է, որ նոյն իսկ իրական կար-
ծիւններ և պահանջները չեն կարողանում
սթափեցնել շահած գուրդները և այնտեղ,
ուր պէտք է լսվէր հրաւեր դէպի քաղա-
քակրթական գործունէութիւն, դէպի հա-
սարակական ընդհանուր զարգացում, հըն-
չում են միջնադարեան քաղաքներ մահմե-
դականութեան միութեան, զանազ գրո-
շակի՝ քաղաքարի մասին: Ինչ գործ կա-
տարելու համար. ինչ ծրագրեր իրա-
գործելու համար: Միթէ՞ եւրոպական
քաղաքակրթութեան հասանք արգելելու
է նրա սկզբունքները խախտելու համար:
Ապարդիւն ջանք: Միայն հիւանդ երեւ-
կայութիւնը և կատարեալ տղիտութիւնը
կարող են թելադրել այդպիսի վայրենի
յոյսեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Եւրոպայի հետաքրքրական անկէնդները մէկը,
անկասկած, Սպանիան է: Հետաքրքրական այն
կողմից, որ մինչդեռ եւրոպայի միւս անկէնդնե-
րը ցոյց են տալիս՝ թէ ինչպէս է մարդը առա-
ջագնացում, իր երջանկութեան համար նորանոր

նուաճումներ անում գիտնական, տնտեսական
և օրգնական շրջանների մէջ, այդ երկրը
ընդհակառակը, պատկերացնում է՝ թէ ինչպէս
է մի ազգ կազմալուծվում, փուլում յետադիմա-
կան խաւար գաղափարներից: Վերջին տարի-
ները այդ ոչնչացող խոցերը երևան եկան մի
քանի խոշոր և վերին աստիճանի խրատական
անցքերի մէջ: Բաւական է իշխել, որ Սպանիան
կուրա կղզում հանդիսացաւ արեւմտեան Թիւր-
քիա և արեւմի մէջ խեղդել ուղեց կուրացիների
տարբերակ պահանջները: Սակայն հարկը հա-
զարներով խաղող մարդիկ ու երեխաներ
կուտորոջ հրէջ հրքան ողորմելի էր, երբ պա-
տերազմի բռնկեց ամերիկացիների հետ, այն
ամերիկացիների, որոնք այժմ չեն կարողանում
յաղթել մի բուռն ֆիլիպինցիներին: Սպանիան
ջարդ ու փշուր եղաւ երկու ամսում, կորց-
րեց իր գաղութականութիւնները, ընկաւ յուսա-
հատ դրութեան մէջ: Պարտութեան հետեւեցին
ներքին խռովութիւններ, և դեռ անցեալ ամսին
սպանիական զօրքերը ճնշում էին այն ապստամ-
բական շարժումները, որոնք սկսվել էին Սպա-
նիայի մի քանի տեղերում: Այդ երկրը մի կա-
տարեալ դժբախտութիւն է, մի դժբախտութիւն,
որ անցաւոր չէ, այլ խորնկական, մշտաւոր,
որ կրօնով է ժողովրդի օրգանիզմը և տանում է
նրան դէպի անկում խորտաւոր: Նորբերումս
Պարթիւնը հրատարակեց մի գիրք «L'evolution
politique et sociale de l'Espagne» անունով, որ
շատ լաւ ներկայացնում է սպանիական ազգի
հոգեբանութիւնը: Այդ գրքի աւանդաբանի հետ,
որ թարգմանաբար բերված է «Книжки Неделя»
ամսագրի մէջ, հարկաւոր ենք համարում ծա-
նօթացնել մեր ընթերցողներին:

Մի ուժեղ ժողովուրդ կազմել թող անձնա-
ւորութիւններից—այս էր այն հոգսը, որին
միշտ հետեւում էին Սպանիան կառավարող
վարչապետները, արխիեպիսկոպոսն և թագա-
ւորները: Նրանց իդէալն էր կառավարել մի
այնպիսի հասարակութիւն, որ բաղկացած
լինէր ոչ թէ մարդկանցից, այլ ոչխարներից:
Համարձակվել իր դատողութիւնն ունենալ նը-
բանց ազգում նշանակում էր լինել սահման-
ված կարգի թշնամի. այդպիսի թշնամին պի-
տէ ոչնչանալ: Իրանց հպատակներին միօրե-
նակ դարձնելու համար՝ նրանք ջնջում էին
հրէաներին և մավրերին. նրանց նշանաբանն
էր. «Սպանիան սպանիացիներին»: Բայց դա
բնի էր. բոլոր սպանիացիները պարտաւոր
էին, բացի դրանից, մի կրօն դաւանել. այդ
միտքից հոգսը իր վրա առաւ ինքիլդի-
ցիայի ատենանը: Զինված ամենապաշտն իրա-
դրութիւններով, որոնք թող էին տալիս նը-
բան նայել մարդկային խղճի ամենաանուրա-
կան ծաղրերի մէջ, ինքիլդիցիան կողպեց բա-
լը սպանիացիների բերանները երկիւղի գրոշ-
մով և խեղդեց նրանց մէջ ազատ ձեռնեղջյու-
թեան հողին: Ամենքն ապրում էին գերեզմանի
երկիւղի ճնշման տակ, մի երկիւղ, որ պահ-
պանում և շահագործում էին վարդապետները:
Նախապաշարմունքին միացաւ բանտի, տան-
ջանքի, խարդիկի երկիւղը. դատաւորները,
գաղտնապաշտութեան դիմակի տակ, իրանց
համար պատիւ և առաքելութիւն էին համա-
րում լինել որքան կաշկեր է շատ դժման:

Այդ թղնը Սպանիան ծծում էր երկար դա-
րերի ընթացքում: Ինչպիսի աղղեցութիւն կա-
րող էր նա ամէն հասարակական օրգանիզմի
վրա:

Այդ տէրրորի ճնշման տակ՝ սպանիացիները
մուռացան ապրել և մտածել իրանց խելքով.
հետեւեցին ինքնավարութեան մի այնպիսի
անընդունակութիւն էր, որ, չը նայած դէպի
օտարերկրացիները տաժած թշնամութեան և
նախաձեռնի, նրանք համարեաւ միշտ հարկա-
ղոված էին հպատակվել օտար տիրապետու-
թեան: Երկրի տնտեսական կառավարութիւնը
այդպիսով անցաւ օտարերկրացիների ձեռքը,
մի բան, որ սպանիացիները երբէք չը կարո-
ղացան և չեն կարող տանել, թէն պիտի հա-
մարձակվէին, որ իրանք անընդունակ են գործեր
վարել: Հենց անցեալ տարի սպանիական ազա-
տամիտները դառնութեամբ յարձակվում էին
Ֆրանսիական ֆիլիպինցիների վրա՝ թէ նը-
բանը շահագործում են Սպանիան:

Այլ բան չէ կազմում դեռ. սխտեմի բոլոր
մասները: Կան աւելի սարսափելի խոցեր:

Կրօնական և քաղաքական բռնակալութեան
ջանքերը բխում են հասցիներ ժողովուրդը,

բայց խաղաղութիւն չը հաստատեցին, այլ,
ընդհակառակը, ստեղծեցին համարեա խրո-
նիկական անիշխանութեան դրութիւն: Քաղա-
քական կուսակցութիւնները չեն վիճում, այլ
կուռում են: Բէֆորմիստի անընդունակ լինելով,
նրանք ընդունակ են միայն առաջ բերել ապս-
տամբութիւններ, յեղափոխութիւններ: Սպա-
նիական գեներալները աստիճաններ և հա-
րստութիւն ձեռք են բերում միայն գաղթա-
կանական կամ ներքին պատերազմների մէջ:
Նրանք իշխանութեան հասնել են ուղում ոչ
թէ այն մտքով, որ ծառայեն երկրի ընդհա-
նուր շահերին, այլ որպէս զի շահագործեն
իշխանութիւնը իրանց և իրանց պաշտելի կը-
պածների օգտին. նրանք նուաճողական քա-
ղաքականութիւնը գործադրում են երկրի
ներսում: Ամեն սպանիացի ատում է տնտե-
սական մրցութիւնը. ամենքի իդէալն է իշ-
խանութիւն և հարստութիւն ձեռք բերել քա-
ղաքական մրցութեան միջոցով, որը նրանք
գործադրում են ամենաւարձաբեղ ձևի մէջ,
այն է ներքին պատերազմների ձևի մէջ: Մե-
թակվելով կաթոլիկութեան հակացողու-
թիւններին, նրանք ատում են իրականու-
թիւնը, ապրում են մտապառնեքների և սար-
սափների միջնորդում, իրական աշխարհից
դուրս, մտածում են իրանց հոգեւորականի
բէջեպտով, իսկ հոգևորականը մտածում է
այնպէս, ինչպէս հրամայում է պապը. մտա-
ծում են արքայութեան երկանութիւնների և
դժոխքի տանջանքների մասին՝ փոխանակ
իրական կեանքի պահանջների մէջ մտնելու:
Սպանիան ներկայացնում է եկեղեցական և
զինուորական քաղաքակրթութեան լիակատար
տիպը, մի քաղաքակրթութեան, որ աշխա-
տում է զիմաղիղ գիտական և արիւնազոր-
ական քաղաքակրթութեան:

Սակայն Սպանիայի վերջին տարիների պատ-
մութիւնը շատ լաւ ցոյց է տալիս՝ թէ ինչ բան
է այդ տիպը: Վերականգնութեան այդ իղձուկ
զոհ է կարողանում ոտք կանգնել, առողջ օդ
ծնել, կազդուրել իր կազմուածքը: Ամերիկայի
հասցրած սարսափելի հարուածը՝ կղերական
խնամակալութեան բարձրագոյն դատաւարու-
թիւնն էր: Ինքիլդիցիայի հայրենիքը ժամանա-
կիս առաջդիմական շարժման մէջ չէ կարող
անպատիժ կերպով գրկել իր հին մեղքերը. նա
պիտի փոխանայ, անյայտանայ, եթէ չէ ուղում
վերանորոգվել...

ՆԱՄԱԿ ՓՈԹԻՒՑ

Օգոստոսի 4-ին

Քիչ ժամանակ չէ անցել այն օրից, երբ քա-
ղաքիս նոր հայրերը ժառանգելով իրանց նա-
խորդներից «ձայնաւոր» անունը՝ երգելիքի օ-
րինակելի անձնութեամբ առաջ տանել քա-
ղաքի գործերը և Փոթիին բարօր վիճակի մէջ
դնել: Օր օրի վրա սպասում է ինքն թէ այդ եր-
դումը զոնէ մասամբ իրականութիւն պիտի
գտնի, բայց ցաւելով պիտի հաղորդեմ, որ
հին բեծիմի ճնշող հողին նորից տիրապետող
մնաց և եղած բարեփոխութիւնները նոր ին-
ցիատիւների խելքի պտուղը չեն, այլ նախկին
ինքնավարութեան ջանքերի արդիւնք:

Եթէ նաւահանգստի լայնացումը գործը այժմ
առաջ է գնում (ի հարկէ, կրիայի քայլերով) և
Փոթիին սպասում է թէ շատ լաւ ապագայ,
դրա պատճառը կրկին նախկին ինքնավարու-
թեան անդամներն են եղել և ոչ ներկայ:

Մինչդեռ քաղաքը միանշանակ անիշամ վի-
ճակի մէջ է և քաղաք առ քաղաք ենթակայ բնու-
թեան քանակազոյն, մինչդեռ հրեշտ անարդել
լայնում է տներն շարքերը և հեղեղ ողողում է
ամբողջ Փոթիին, այստեղ, ներկայ ինքնավա-
րութեան կաղաքակրթութեամբ, հին աշտարակնե-
րի վերականգնման և քաղաքալիսի ձանապար-
հորդութեան համար հաղարներ են բաց թող-
նում քաղաքային գանձարանից, անուշադի-
թողնելով այն պարզ ճշմարտութիւնը, թէ վեր-
ածակ համեմատ պէտք է մեկնել ոտքը:

Օգոստոսի երեքին այստեղ պատահած հրե-
նա այնքան սոսկալի կերպարանք ունէր և այն-
քան լաւ բնորոշեց քաղաքի վարչների գոր-
ծունէութիւնը, որ ամբողջ միաբնակաւ տրտու-
ն և ըրողը էր արտայայտում պատուելի «ձայնա-
ւորներին» հասցէին: Մի կրպակի մէջ ծագած
կրակը կարողացաւ 5 ժամայ մէջ ոչնչացնել

26 կրպակ և 20—25 մարդու ունեցած վերջին
կոպէկները:

Աստիկանութիւնը կանգնած ջուր էր աղաղա-
կում, բայց քաղաքի վարչները սառնասրտու-
թեամբ երկու տակաւ են տալիս քաղցից մաշ-
ված ձիերով: Եթէ երկաթուղու և նաւահանգս-
տի ջրցան մեքենաները չը լինէին, որոնք նմա-
նապէս խոշոր օգնութիւն չէին տալիս հնու-
թեան պատճառով, թերեւ 26 կրպակների շա-
րունակութիւնը ամբողջապէս այրվէր:

Մինչդեռ Ռուսաստանի ամենայնայն քաղա-
քը ունի իր մշակած ծրագրերը հրէջ խմբերի
համար, պատրաստի մարդիկ և մեքենաներ ու
տակաւներ, մինչդեռ իւրաքանչիւր տարի տե-
ղեկութիւններ և կարգադրութիւններ են տրվում
այդ խմբերին վարչութիւններից, այս անիշամ
քաղաքում, իր փայտաշէն տներով, չը կայ գոնէ
մի 10 հատ տակաւ, որ գոնէ ձեռքով ճանդց-
նելու ջուր հասցնէր:

Ամօթ և հազար ամօթ Փոթիին, որ 150 հա-
զար րուբլի քաղաքային մուտք ունենալով չէ
կարողանում 10 մարդուց քաղկացած մի հրէջ
խումբ պահել և մի երկու հատ մեքենայ, որի
իւրաքանչիւրը 400 ռուբլուց անել չարժէ:

Ել ինչ հոգատարութիւն հայրերի կողմից, երբ
20—25 վաճառական թաղեցին իրանց խանութ-
ների աւերակներն տակ իրանց քաղաքը, և ինչ
խնամք, երբ 5 ժամայ մէջ կորաւ 300 հա-
զար րուբլի կարողութիւն և ստացուածք:

Մենք չենք կասկածում, որ այդ երկուքը կա-
րող է կրկնվել դուցէ աւելի սաստկութեամբ,
քանի որ ասիական դանդաղութիւնը այնպէս է
կաշկանդել, որ հազիւ թէ առանց երկրորդ և
երրորդ օրինակի մի քայլ անեն այդ ճարակի
դէմ:

Թող այնքան ծախսեն նաւահանգստի համար,
մինչև որ նա մըրի Ամստերդամի և Լոնդոնի
նաւահանգստների հետ, բայց քանի որ առօ-
րեայ քրտինքով ապրող վաճառականը և ար-
հեստաւորը պէտք է իր բաղդը Աստուծու խը-
նամբին թողնի, այն ժամանակ հեշտ է և ու-
րիշ տեղ ապրել, քան այս ճահճային քաղաքում:
Փոխանակ հին աշտարակները նորոգելու և
մարդիկ բնակեցնելու՝ հարկաւոր է փողոցնե-
րում հողը բարձրացնել, որ անձրևային ե-
ղանակներին մարդ չը լողայ, հարկաւոր է մի
հրէջ խումբ ունենալ, հարկաւոր է մի միջնա-
կարգ դպրոցի, մասին մտածել, հարկաւոր
է փողոցներն ապստիլ փողոց, որ 15 հազար
մարդ չը խեղդվի փողոց, հարկաւոր է ճահճ-
ները մաքրելու մասին մտածել, և այն ժամա-
նակ կանոնը միայն՝ թէ դուք ձայնաւոր էք
գործի համար և ոչ թէ «ձայնի» համար:

Ստ. Մազմանեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ֆրանցէնս Բադ, օգոստոսի 11-ին

«Deutscher Hilfsbund für Armenien»-ի գոր-
ծունէութիւնը սկսում է հետաքրքրել գերմանա-
կան մամուլը, և առիթ է տալիս գնահատա-
նալ և մի յօդուածների երևան դառնալ զա-
նազան նշանաւոր լրագիրներում: Հետաքրքրե-
լով այդ հարցով և ծանօթանալով «միութեան»
գործունէութեան հետ, ինչպէս զանազան գը-
րուածքների միջոցով, այնպէս և անձնական
ծանօթութիւններով այդ գործի վարիչների հետ,
ես եկայ այն կարծիքի, որ «Deutscher Hilfs-
bund für Armenien»-ի գործիչները անպայման
արժանի են չնորհալույթութեան, և գերմանական
այն լրագիրները, որոնք յարձակվում են այդ
«միութեան» վրա, պատարակելով նրա իբր թէ
անարարական գործունէութիւնը (Proslenten-
macherei), դրսեւորում են առաւել քան բարո-
յական լարերի վրա, ի նկատի ունենալով Գեր-
մանիայի ներքին քաղաքականութիւնը Թիւր-
քիայում: Այդ տեսակէտից հիմնվել միայն այդ
լրագիրների վրա, ինչպէս անում է գերմանա-
կան հասարակութիւնը դրա մասին, որով մենք հա-
սարակութիւնը կարողանաւ ունենալ մի ան-
կողմնապահ նիւթ, և հրատարակել նրան
«Մշակի» էջերում: Կաւեցանք, որ մտադրու-
թիւն ունենալով տալ միայն նիւթ, այլ ոչ թէ

իմ կարծիքը, պէտք է աշխատեմ որքան կարելի է շատ տեղեկութիւններ հաղորդել: Չափազանց հետաքրքիր է մօտ 200 հայ որբերի դատարարական կազմակերպութեան գործը:

Գեորգ Մէլիք-Գարագեօզեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրիները, բեկիւնցի կապիտալիստներն մի խումբ դիմել է երկրագործութեան և պետական կառավարման միջնորդութեան խնդրանքով խնդրելով ակցիոներական ընկերութիւն կազմել կովկասեան հանրային ջրերը շահագործելու և արտասահման արտահանելու համար:

Կիրակի, օգոստոսի 8-ին, էրմիտաժ այգու մարտիին թատրոնում կայացաւ պ. Կարա-Մուրզայի համերգը: Հայկական համերգներին երկար ժամանակ կարօտած հասարակութիւնը լցրել էր ամառային թատրոնի դահլիճը ծայրէ ծայր, վատա՜ կարծէք ժողովական դաւաճանով երգեցիկ խմբի կազմով խմբապետի տաղանդի վրա: Եւ հասարակութիւնը յուսարար չեղաւ: Երեկոյթը բարձրակողմանի էր ծրագրի կողմից և բաւարար անցաւ կատարման տեսակէտից: Անաշուղ կարելի է համարել, ծրագրի կողմից, «Համեստ աղիւկ» առանձնեղջիւրի միացումը «Ջիմ վանդ» խմբից հետ, մինչդեռ այդ երկուսի մէջ չէր կայ ոչ մտքի, ոչ եղանակի կապ: Բացի այդ, ժողովրդական երգերի վերջին վանկերի կրկնութիւններն մէջ կան շատերը, որոնք անբնական են և եթէ, կարելի է ասել, անտրամաբանական: Նոյնպէս անտեղի է վերջին piano-ն «Վառնիկ» մէջ, որ անցաւ առհասարակ թոյլ: Սակայն, ինչ վերաբերում է piano-ներին ընդհանրապէս, նրանք շատ գեղեցիկ են պ. Կարա-Մուրզայի խմբերգներում: Գալով կատարման, եթէ չը հաշուենք «Գնացէք տեսէք», որ խումբը անհաստատ գիտէր կամ որ թոյլ տը պատրուկներն գործող չնորհիւ այդ երգի առանձին մասեր երգող խմբակներէ մի քանիսի թուրովեան, երեկոյթը պէտք է միանգամայն աւելորդաժ համարել, եթէ ի նկատի ունենանք մասնաւոր խմբի կազմութեան վրա դրած դրած վերին աստիճանի կամ ժամանակը: Այլիք էր ընկնում մասնաւոր շէք կեցող զգայուն և «Ջան գիւլումի» գեղեցիկ, նուրբ և ազդող կատարումը խմբի կողմից: Երեկոյթի ժամանակ առանձին երգողներէ վատ չէին պ. Պոլաճեան (բարիտոն) և օր. Աստղիկ (սոպրանո)՝ безъ осомыхъ примѣтъ, վերին աստիճանի անփորձ, բայց իրան չափազանց ազատ պահող բեմի վրա: Ինչ վերաբերում է պ. Ռոստոմեանին, նրա ձայնը (բաս) յուսառենքից է և հազուադէպ՝ քաների կողմից աղքատ հայ հասարակութեան մէջ: Երեկոյթի ընթացքում պ. Կարա-Մուրզան և իր խումբը արժանացան յաճախ և բաւական ծափահարութիւնների, որոնք ներկայացման վերջում կատարեալ օվաղանքներ ձև ընդունեցին պ. Կարա-Մուրզայի հասցէին, որ կարող է վատա՜ լինել, թէ իր մասուցած մեծ կուլտուրական ծառայութիւնը անուշադիր չէ թողնվում հայ հասարակութեան կողմից:

Ստացանք Վ. Գեորգիեն շտէյնի կազմած մի ուղեցոյց Թիֆլիս քաղաքի համար: Օգտվելով գրական աղբիւրներից, հեղինակը իր ներկայ գրելի մէջ տալիս է Թիֆլիս քաղաքի մասին պատմական, աշխարհագրական, ազգագրական և տնտեսական տեղեկութիւններ: Առանձին գլուխներ նուիրված են գործարանական և առևտրական գործին, կրթութեան, առողջապահութեան, մամուլին և թատրոնին: Բացի դրանից հաղորդված են զանազան հիմնարկութիւնների մասին տեղեկութիւններ: Գրքից կարող է լինել հետաքրքրական՝ օտարներին համար, որոնք, դալով մեր քաղաքը, միշտ կարօտ են լինում առաջնորդի: Գրքը ազատ չէ սխալներից: Գինն է 40 կոպէկ:

«Русскія Вѣдомости» լրագիրը հաղորդում է, որ աւարտող բժշկ ուսանողներն ընտրութիւնները այս տարի կը մկնվու Մոսկվայի համալսարանում սեպտեմբերի 1-ից:

Հոկտեմբեր ամսից Պետերբուրգում բացվելու է կենսաբանական տեղեկատու քրիթ, —բաժանմունքներով Մոսկվայում և Նիժնի-Նովգորոդում:—Ասիային վերաբերվող բոլոր առևտրական գործերի համար: Բիրժան կուենայ գործակալներ բոլոր ասիական խոշոր կենտրոններում:

ԲԱՆՈՒԻՑ մեզ հաղորդում են. «Ներկայ օ-

գոստոսի 1-ից այստեղ ևս մտցրվեց նաւթի վրա ակցիզ, որից մինչև այժմ նա ազատ էր: Շատ տանողներ, որոնք ունէին տանը նաւթի պաշար, աւելի կուենան օգտվել էժան նաւթով մի երկու շաբաթ, որից յետոյ նրանք ևս բոլորի հետ միասին կենթարկվեն ընդհանուր կարգին և կը սպառեն թանգ գնով նաւթը:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ներկա ամիս է ինչ երաշտը աւերել է ամեն ինչ և խեղճ դիւղացին մնացել է վերջին թշուառութեան մէջ: Այսօր հաղարաւոր ամբողջ ներկայ եղաւ թափորին քաղաքից դուրս, որտեղ բերել էին ս. Յակովբայ և Յովհաննէս Մկրտչի մասունքները: Եղանակը ահա քանի օր է փոխվել է և երկինքը ամպամած է»:

ԼՈՒՐԱՍԻՑ մեզ գրում են. «Թիֆլիսի վերաւորական դատարանի բաժինը օգոստոսի 2 և 3-ին ընկնելով աւաղակապետ իզմարացի Բէղալ Մահմեդ օղլու գործը՝ ուրեանդիկ Ասկարի և մի կապակի սպանման մասին, վճիռ կայացրեց մահվան պատժի ենթարկել նրան կախաղանի միջոցով»:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՑ մեզ գրում են. «Տեղիս և շրջակայ գիւղերի եղջիւրաւոր ընտանի կենդանիներն մէջ տարածված է մի տեսակ հիւանդութիւն, որի ինչ լինելը մինչև այժմ դեռ չէ որոշված հաստատապէս: Կենդանին 2—3 անգամ բարձր բառաչելուց յետոյ ընկնում է գետին և իսկոյն սատկում: Այսպիսի դէպքեր պատահել են թէ տներում—գլխից ժամանակ և թէ դաշտերում—արածելու: Բառաչելուց առաջ կենդանին հիւանդութեան ոչ մի նշան չէ ցոյց տալիս»:

ԱՐԱՍԹՈՒՄԱՆԻՑ մեզ գրում են. «Այս ամառ այստեղ մի առժամանակ սաստիկ չորքեր արեց, այնպէս որ չէր կարելի երևակայել, որ մարդ դառնում է Արասթումանի նման ամառանոցում: Բայց ահա երեքօրեայ անձրեւից յետոյ եղանակը այնպէս ցրտել է, որ առանց վերաբրուի տանից դուրս գալը անկարելի է: Նրկար անձրեւից յետոյ այսօր առաւօտ տեղեւ կարկտախառն անձրև և տեղեւ մօտ 10 քալէ»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Հայ դերասանական ընկերութիւնը տուեց ամիսիս 4-ին իր 10-րդ ներկայացումը ի նպատակ օր. Թիֆլիսեաների, Խանդավորեանի թատրոնին: Խաղացին Նրվէի «Ճիւղաներ» կօմ. 3 գործողութեամբ և «Ճարահատեալ դերասան» վոլըվիլը:

Մեզ գրում են ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՑ. «Անցեալ շաբաթ Մայր Աթոռի մառանցից գիշերը գողացել էին մէկ չուպալ ալիւր և մէկ չուպալ ձաւար (խաչապուրի) չորացրած ցորեն, որ գործ է ածվում բարասերով (жидкая пшеница) տեղ: Գողբը թողել էին պատի վրա մի երկար պարան, որի մի ծայրից ծար կապելով, միւս ծայրով իջել էին պարսպից ցած: Եւ դարձանալին այն է, որ գողութիւնը իմացվում է ոչ թէ պակասած չուպաներով, այլ գողերի թողած պարանով: Ով գիտէ, դուցէ ուրիշ բաներ էլ են գողացել»:

ՀԱՒԻՐՈՒԹԻՑ մեզ գրում են. «Այս տարի հունձը մեղանում առատ չէ, կարելի է ասել միջակ է. պատճառը՝ ապրիլ ամսում եկած սաստիկ կարկուտն էր, որը դիւղացիներին վերջին ծայր յուսահատութեան էր հասցրել, բայց, բարեբաղդաբար, կարկուտից յետոյ պարբերաբար տեղող արձրները արևի կիողը ձառադայթների տակ կարողացան բաւարար ազդեցութիւն ունենալ դեռահաս հացաբոյսերի վրա, դիւղացիների մէջ նոր յոյս ու եռանդ ծնեցնելով դէպի կեանքը: Հացի դինը մեղանում դեռ այժմս չէ բարձրանում պուրը 1 րուրի 40 կօպէկից»:

ԱՆԱԼՔԱՍԻՑ մեզ գրում են. «Գերասան Վրոյր յուլիսի 25-ին մեր քաղաքում ներկայացրեց Մօլիերի «Ագահը» (L'Avare) յայտնի կօմիդիան, որ թարգմանել է ինքը դերասանը: Պ. Վրոյրը կատարում էր Հարպագօնի պատասխատու դերը: Մենք չափ չէինք հետաքրքրվում դերասանի խաղով, որովհետև Հարպագօն նրա ամպլուան է, և նրան, առհասարակ, աղողվում է վերստեղծել իսկական կօմիկական ընաւորութիւնների կենդանի տիպեր: Պ. Վրոյր, ինչպէս երեալ նրա մտածված և խելալի խաղից, լատուսմանարիւր է Հարպագօնի նուրբ-հոգեբանական և դժուար դերը, որի պատճառով նա մեծ տիպականութեամբ կատարեց այդ դերը և գեղեցիկ տպաւորութիւն արեց հանդիսականների վրա: Սիրողները, ընդհանրապէս վերջրած բա-

ւարար խաղացին իրանց դերերը: Գահլիճը համարեա թէ լի էր հանդիսականներիով, որոնք ծափահարութիւններով վարձատրեցին պ. Վրոյրին ու սիրողներին և զո՜հ սրտով հետացան, որովհետև «Ագահը» թէ ձիւղագրեց և թէ մըտածելու նիւթ տուեց նրանց»:

ՆՈՐ-ԲԱՅԱՍԻՑ մեզ գրում են. «Նօթանաւուն տարի է, որ եկել ենք այս երկիրը և այսպիսի բան չէինք տեսել միաբնան յայտնում են տեղացիները: Նօթ չը կայ: Նօր-Բայագէտի ընդարձակ խոտատեղերը, որ յայտնի են Նրևանի ամբողջ նահանգում իբրև կանաչ-սիդաւէտ մարգագետիններ, այս տարի խոտ չեն տըւել: Հողագործները շատերը, որոնք նախկին տարիներում 10 սայլ խոտ են հնձել, այս տարի հալու մի մի սայլ ունեն. իսկ շատերը դեռ այդքան էլ չունեն, այլ հնձել են, ծիծաղելի է ասել, մի-երկու էշի բեւը խոտ միայն, որ եթէ կերցնելու լինեն իրանց լծկաններին՝ մի օր կը բաւականացնի: Այժմ մեղանում խոտը ամեն բանից թանգ է—սայլը 15—20 րուրի, փոխանակ 3—5 րուրը: Անաստաւէրները ա՜հ ուղղի մէջ են, քանի որ եկող ձմարը իրանց անասունները առանց դարբի կը կտորվին, որովհետև դարմանն էլ շատ քիչ է լինելու՝ հացաբոյսը կարճ, թզաչալ բարձրութիւն ունենալու պատճառով: Եւ ահա բաւականաչափ յարը չունենալու պատճառով այժմանից իսկ շատերը աշխատում են իրանց անասունները, նոյն իսկ տանու տաւարը, զլիւից ուղ աւնել: Մարդու սիրտը ցաւ է գգում, երբ տեսնում է թէ ինչպէս մի լծկան եղը, որ գնել են 40—50 րուրով, տալիս են 15 ր., կիթու կոմի՜ ծախում են 8—9 ր. հորթի հետ միասին: Կամ թէ մարդ սարսուռ է դգում, երբ տեսնում է, որ մի աղքատ ընտանիքի միակ մի զոյգ լծկանները մորթում են և միւր ծախում՝ մի քանի րուրի ստանալու համար»:

ԻՒԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Ամառանոց եկած ուսու և վրացի սիրողները տուեցին մի քանի ներկայացումներ, մէկը յօգուտ ուսանողների, միւսը՝ ուսուց ծխական դպրոցի: Ներկայացումները բովանդակութեան կողմից թէև մի առանձին բան չէին ներկայացնում և ոչ էլ սիրողներ խաղը, բայց նիւթական աշղողութիւնը շատ մեծ էր: Հայ ուսանողներն ու ուսուցիչներն ևս վճռել են հայերէն ներկայացումներ ավողեցնելու: Մտադրութիւն ունէին ներկայացում տալ յօգուտ «Братская Помощь»-ի հրատարակութեան, բայց իրանցից անկախ պատճառով նպատակը փոխվեց յօգուտ բոսօնդայի բեմի: Ընտրված են «Ընտանեկան փոթիկ»-ը և «Վայրենի» վոլըվիլները, մի քանի հատ ժողովրդական երգեր, մեր պատարալի արարողութիւնից՝ որպէս նման մի կտոր քառձայն: Թէ որքան ներկայիւններ կրելին նախաձեռնողները գործի աշղողութեան և երգիչ տղաներ ու օրիորդներ—մանաւանդ օրիորդներ ճարեղու համար, էլ աւելորդ է ասել: Գործի աշղողութիւնը կը լինի նրանց վարձը: Ներկայացումը նշանակված է ամիս 11-ին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻՑԻՑ

Մուշ, յուլիսի 15-ին
Հակառակ դարմանային յորդառատ անձրևների, ամառ շատ չոր անցաւ տեղը, տեղ տեղ ալ արևեկեան տաք և չորային բամբի ազդեցութեան տակ ցանքներ եղիկ, եղիկ չորացան: Այս եղանակին ժողովուրդ տեղական բարբառով աւանանում է թախթաժա, որ ասել է հին արժուիքների վերջնալը և նորի սկսելը: Այս օրերը, որ հենց նոր են սկսել դարեւադը, ժողովուրդ սովածութիւնից իրարու ակամջ են կրնում, ինչպէս ասում են, «մէր զմանուկն է թալում», այսինքն մայր զաւակին մոռանում է: Նոր դուրս եկած դարն այն աստիճան է սպաւում, որ ընչ կը մնայ ձիւր խոլորանտոց լինեն տեղական կառավարութեան իրենց ձեռնվան պարէն պարպելուն համար: Հացի գին ալ դիւրով բարձրանում է: Այժմ ցորենի կօտ տալիս են 12—13 դրուշի, որի համար ժողովուրդ անկարող է այդ գնով հաց ձեռք բերել և անասելի կերպով ամռնվում է սովածութիւնից:

Այս տարվայ խիտ չորքերի չնորհիւ առատ գաղպէն է լինել: Դա մանանայի նման մի տեսակ մածուցիկ քաղցր հիւլ է, որ ալիւրի թանձր չեքտի նման իջնում է անտառների և դաշտերի վրա: Սա իրենալին անտառոտ տեղեր համարվում է երկնային բարբիք, ընտելեան

պարզե, որովհետև ժողովուրդը լուսնում է անտառների տեղերներ և նրանից պատրաստում է մի տեսակ քաղցր հեղուկ, բրուպ անունով, մեղրից պակաս անդաւար: Նրբեմն ալ չորացնում են տեղերներ, թափ են տալի և այդ ալիւրից կազմում են պանիրի նման հացեր և արտահանում են շրջակայ քաղաքները վաճառելու: Ընդհանրաւոր, դաշտային տեղերի համար բընութեան պատճառն է գաղպէնի իջնելը: Դա առհասարակ կանանչ անդերի վրա իջնելիս տարբարվում է և կազմում է պղնձագոյն թանձր փոշիի ձև ժանդ, որը անժամանակ չորացնում, փչացնում է ցորենի արտերը: Ժանդից դարնված հաց տալիս է կէս արդիւնք, յետոյ կը լինի ոչ անդաւար, թիւված ժամանակ լաւ չէ բացվում, չէ աճում և պատճառում է ստամոքսի խիթ և թանջը, նրա սակաղին նուազում, հաւասարվում է կորեկին և գըլկըլին: Հայ ժողովուրդը, դժբաղդաբար, ոչ մի կերպով չէ օգտվում այդ երկնային բարբիքից, նախ որ դաշտաբնակ լինելով նրա ցանքը վնասվում է, երկրորդ այս տարվապալի ժամանակներ չէ կարող տանից հեռանալ, լեռներ բարձրանալ և գաղպէն պատրաստել, միայն քիւրդերի մէջ ապրող հայեր՝ իբրև մասնագէտ մանանայ պատրաստելու՝ կօղովին նրանից:

Դաշտի ժողովրդեան մէջ տիրող անտանի չորքերի և առանց հացի մրգեղէններ և թան ու թացան ուտելուն համար, շատ տարածված է ջերմ, հարկնք (տիւր) և գլխացաւ: Ի հարկէ, առանց խնամքի մեռնողներ շատ են լինում: Ամբողջ Մուշ քաղաքը, որ հայ և թիւրք են և որ 20 հազար ժողովուրդ ունի, կառավարվում է միայն մի հայ ժողովրդական բժիշկով, որի համբաւը, իրանից լաւերի բացակայութեան չնորհիւ, տարածված է քաղաքում և թէ գիւղերում: Արա խակական անունն է Սեղեն Գոնջոյեան, բայց ժողովուրդը նրան ճանաչում է աւելորդ Կազէ անունով: Տաս տարեկան տղայից մինչ 70—80 տարեկան ծերունիից հարցրէք հէքի մ Կազէն և բոլորը նրան ցոյց կը տան մատով:

Նրա ամբողջ բժշկարան-մատենադարան բաղկանում է մի 100—150 տարվան հին գրչապիւր ժողովրդական-խրատական մատենից և նրա դեղատունն է մի փոքր կաշիէ չաւօղան, որը հիւանդին այցելած ժամանակ կրում է իր վրա: Ուրեմն այժմ ամբողջ Մուշ քաղաքի բժշկութեան յոյս մնացել է Կազէի վրա. 5—10 տարի առաջ, բարի ժամանակներում, զինուորական բըժիշկներուն կը լինէին բրիտանիայ օգնականներ, որոնք մօտէն չէին ունենալով հայ ժողովրդի հետ, երբեմն իրանց խորհուրդներով և դեղերով օգնում էին նրանց. այժմ այդ բանն ալ վերջացաւ. կայսերական իրազէով, զինուորականների մէջ քրիտոնիայ օգնականներ չը պէտք է լինեն:

Հիւս մեր քաղաքի համար կայ մի քաղաքային բժիշկ, աղղով յոյն-կաթօլիկ: Աստուծո խոռ հեռուն տանի, սարի քիւրդեր նրանից 20 անգամ լաւ են: Այս տխուր հանգամանքների չնորհիւ, այժմ փոխադրական տիֆ բաւակային անմեղ զոհեր է տալում մեր քաղաքից: Արդէն ճիշդ 1894-ի ամառ, այս ժամանակներ, մի փոքրիկ խոլորա եկաւ. մեր քաղաքը, որը 15—20 օրվան մէջ 1000—1500 երիտասարդ զոհեր տարաւ:

Անցորդ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«НОВОСТИ» լրագրի թղթակիցը հետեւեալ մանրամասնութիւններն է հաղորդում: Լաբորի կեանքի դէմ եղած սպանութեան փորձի մասին, որ պատմել է ինքն Լաբորի: Սեւ գնում էր զինուորական դատարանի իմ կնոջ հետ: Կինս մուռացել էր մուտքի տոմսակը, վերադարձաւ. որ բերել Ես գնալիք մեծակ: Նկատելով հեռուից Պիկարին և Գաստին, ես հասայ նրանից: Թանկարծ երկու փողոցների մէջտեղ բէժօղկէր ձայն լսելի, ես սաստիկ ցաւ գգացի և ընկաւ Պիկարն ու Գաստ վազում: Վաղեցին մարդասպանի ետեկց: Ինձ չըջապատեց ամբողջ, բայց ոչ որ ոչ մի օգնութիւն չը հասցրեց ինձ, մինչև որ եկաւ կինս: Նա կաացաւ. դէպի ինձ, զգաց երկուց և կարգադրեց օգնութեան մասին: Այդ միջոցին մի ինչ որ երիտասարդ, իրան բժիշկ ձևացնելով, գնեց ինձ և գողացաւ պօրտֆէլս: Վերջին տարի ու կնկալ ընթացքում ես ամեն օր սպառնական նամակներ էի ստանում: Գեռ երէկ ես երեք նամակ բաց արի և դրանից մէկի մէջ ինձ սպանում էին ընտկարանս հրդեհելու դէմ կատարած սպանութեան փորձը կօչնէ խեղճ Գրէյֆուսին: Գաստ պատմում է, թէ մարդասպանը աղաղակում էր անց ու դարձ անողներին: Մէկ գնալով ես ոչնչացրի ամբողջ Գրէյֆուսիալան: Ուրիշ հինգ գնալով պատրաստ են ձեռք համար, եթէ դուք ձեռք կը տաք ինձ: Ամբողջ ոչ որ չը վաղեց նրա ետեկց: Պիկար պատմում է, թէ բէժօղկէր դաւարակից հինգ քայլի վրա: Ինքը և Գաստ վաղեցին մարդասպանի ետեկց աղաղակելով՝

բռնեցե՛ք նրան: Բայց անցնողները վախեցին: Եթէ իր մօտը ընկնէր ունեւոր, կը սպանէր մարդասպանին: Իրէնքիս մի ցաւակցական նաւակ է գրեթէ Լաբորի, որը հարկաւոր չհաւաքիրներ է ստանում, որոնց մէջ ցաւակցութիւններ են յայտնուում: Ձօլաւ արտադրեց, երբ նրան յայտնեցին տխուր լուրը: Նա ասեց. «Մեր հակառակորդները հանել են դիմակները: Մերսիէ այցելութեան գնաց վերադարձին, բայց նրան թող չը տուն տանեմ հիւանդին: Պարզում ամենքն էլ իրանց համակրութիւնն են յայտնում Լաբորին: Ոչ ոք չէ կասկածում, թէ մարդասպանը վարձված է եղել, որպէս զի գործի ըննութիւնը յետագայի է զբաղւել Իրէնքի-ֆուսն իր գլխաւոր պաշտպանի:

«Neue Freie Presse» լրագիրը հաղորդում է, հիմնվելով յուսալի աղբյուրների վրայ, թէ այն լուրը, որ իբր թէ խաղիքը կարող է Սուդանում գումարել 50,000 զօրք, բոլորովին անհիմն է: Խաղիքը ունի ձեռքը տակ միայն մի քանի հազար զօրք և թէպէտ դեռ կարող է որոշ չափով անհանգստացնել անգլիացիներին, բայց լուրջ վտանգ չէ կարող ներկայացնել սիրդարի համար: Իրեթէ անհնար բան է, որ անգլիական կառավարութիւնը զբաղւի Սուդանից խաղիքի չնորհիւ: Լրագիրներին հաղորդում են, թէ մի բուսման պրոֆէսոր, որ դադարում էր Կարադա-ղի բուսականութեան և կենդանականութեան ուսումնասիրութեամբ, ձերբակալված է, կասկածվելով իր լրտեսի:

Բուսականութիւնը արանական կոմիտե, ինչպէս Վիէնայից հեռագրում են «Times» լրագիրը, մի ծրագիր կազմեց, որի վրայ և դիտարկութիւն ունի դարձնել Սուդանի ուղարկութիւնը: Ծրագրով պահանջվում է՝ անկախութիւն չտրուել Սուդանի սուլթանի գերիշխանութեան տակ, (պետութիւններն են նշանակում արանական ընդհանուր-նահանգապետին), հիմնել ազգային ժողով, ազգային պարագանք և ազգային միջոցաւ, որը պէտք է բաղկացած լինի մասնագիտական, կաթոլիկ և ուղղափառ ազգաբնակչութիւնից, արանական եկամուտները պէտք է ծախսվեն արանական ժողովրդի կարիքների վրայ, ընդհանուր ներուժն պէտք է չնորհիւ և արանական ու թիւրքաց լեզուները պէտք է մտցվեն որպէս պաշտօնական լեզուներ նոր վիլայէթի համար:

Մ Շ Ա Կ Կ

ԻՌԻՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

6 օգոստոսի

ՊԱՐԻՑ: Նախօրեակներու լրագիրները ընդունում են Շնէյդերի հերքումը և անհրաժեշտ են համարում, որպէս զի զինուորական դատարանը կարգադրէ այդ հարցը, չը նայելով որ նա փափուկ է:

Լաբորին վերադարձող յանցաւորը ձերբակալվեց. նրա անունը Գլորի է, Դիւ-Նորդ դէպարտամենտից: Նա խոստովանեց իր յանցանքը:

Բէն: Գլորի, ըստ երկույթի արքեպիսկոպիտի խոստովանութիւնը կասկածելի է: Կարծում են, որ նա չէ յանցաւոր:

Բէն: Դատարանի նիստը սկսվեց: Ներկայ է բաղմամբ: Տասնութութիւն: Ներկայ է և փաստաբան Մորէն: Հանգստութիւնը կատարեալ է: Պիկար, վերադառնալով բորդերօին, ասում է «Գնում եմ զօրահանդէսին» նախադասութեան առիթով, շտաբում ծառայողներին սեպտեմբերի զօրահանդէսներին ուղարկելու մասին խօսք էլ չէ եղել: Ապա նա ընկում է էկսպերտների եզրակացութիւնները, ընկնում է գաղտնի dossier: Թեւեղով այն զօկումէները, որոնցից բաղկացած է dossier, նա աշխատում է ապացուցանել, թէ այդ անիւթա Դ... խօսքը պարունակող դոկումէնտը չէ վերաբերում Իրէնքի-ֆուսին: Վկան ապա խօսում է այն մի քանի զօկումէնտների մասին, որոնք, ըստ երկույթի, կեղծված են: Նա ապացուցանում է, որ ոստիկանութեան զեկուցումները Իրէնքի-ֆուսի դէմ անհիմն են: Նա բացատրում է, թէ ինչ կերպ ինքն համոզվեց, որ Էստէրհադին է բորդերօի հեղինակը. նա հաւատացնում է, որ Էստէրհադին անունը առաջին անգամ տեսաւ petit bleu-ի մէջ: Ի նկատի ունենալով, որ Էստէրհադի թխանանագին խնդրում էր ընդունել իրան միլիտարութեան մէջ, Պիկարը քննեց նրա ձեռագիրը և գտաւ նմանութիւն բորդերօի ձեռքի հետ: Նա զեկուցեց այդ բանի մասին Գոնդին. նա զարմացաւ, բայց յայտնեց, որ միլիտարը և Բուադէֆր անհայտն են համարում վերսկսել գործը: Պիկար պատասխանեց այդ բանին. «Ոչ մի բան չէ կարող արգելք դառնալ գործի վերսկսելուն, եթէ ենթադրութիւն կայ, թէ Իրէնքի-ֆուսը անմեղ է: Գոնդ նկատեց. «Կարելի է այնպէս անել, որ ոչ ոք ոչինչ չիմանայ:—Գոնդեյ, պարզակեց Պիկարը, դուք սարսափելի բաներ եք ասում: Նա չը գիտեմ թէ ինչ կանեմ, բայց ես այդ գաղտնիքը հետս գերեզման չեմ տանի: (Մեծ լուր՝ ունեւոր): Սերսը դարձնելով դէպի գեներալները, Պիկար աւելացնում է. «Գործը չ'ենց այսպէս էր: Լաբորի լաւ անցկացրեց պիւրը: Յանցաւորը

գտնելու ջանքերը ապարդիւն են անցնում: Բէն: Դատարանի նիստը Պիկար ասում է, որ Գոնդ յանձնարարեց իրան լրացնել dossier Էստէրհադիի դէմ, այդ պատճառով ինքն խուզարկութիւն կատարեց վերջինիս նախկին բնակարանի մէջ: Բորդերօի հրատարակումից յետոյ, միակ խոչըր անցքը Անրիի կեղծումն էր: Պիկար գանգատվում է գործաւկալ Ֆէնկէի գործողութիւնների դէմ, որը Անրիի աջ ձեռքն էր և զեկուցումներ էր կազմում Պիկարի դէմ: Վկան կապ է տեսնում այդ զեկուցումներին և այն փաստերի մէջ, որոնց համար մեղադրում էին իրան: Պիկար խօսում է ապա այն ժամանակվայ մասին, երբ ինքն Տուսիտում էր, և այն խարդախ քայլերի մասին, որ Անրի անում էր իր դէմ, այն է Պարիզի դառնալուն լրագիրներին հեռագիրներ էր հաղորդում «Բլանշ» և «Speranza» ստորագրութիւններով, որոնց օգնութեամբ նա գտաւ մեքենայութիւնների հեռքը, որոնց զո՛ւ էր ինքը: Նա կասկածում էր Էստէրհադիին և պահանջում էր միլիտարից՝ ըննութիւն կատարել: Նա կարակաւնապէս հերքում է այն փաստը, թէ petit-bleu-ի վրայ պատասխանի գործը ինքն է գրել: Նա յիշեցնում է Պէլլիէի ըննութեան մասին և դանդաղում է, որ զինուորական դատարանը, որը դատում էր Էստէրհադիին, իրան հարց ու փորձի չենթարկեց: Վերջը վկան խօսում է այն եղանակի մասին, որով անցկվել էր բորդերօն: Բո՛ւ է Մերսիէ խօսք են պահանջում: Բո՛ւ է Պիկար մի քանի բացատրութիւններ են տալիս միմեանց լրտեսութեան մասին Կաննէլի նախկին գործի առիթով: Ապա Մերսիէ հերքում է Պիկարի մի քանի պնդումները և ասում է, որ երբեք Պիկարին նամակ չէ տուել 1894 թվի զինուորական դատարանի նախագահ գնդապետ Մորէլին յանձնելու համար. երբեք բան չէ ասել նրան գաղտնի զօկումէնտի մասին: Պիկար պնդում է, թէ ինքն յանձնել է նամակը գնդապետ Մորէլին: Նիստը փակվեց մինչև վաղը:

ԲԵՐԼԻՆ: Պատգամաւորների ժողովը, երկրորդ ընթերցանութիւնից յետոյ, մերժեց 212 ձայնով 208-ի դէմ Գործաւոր-Բէն ջրանցք անցկացնելու ծրագիրը, նոյնպէս և լրացուցիչ կառուցումները Գործաւոր-Էյմս ջրանցքի համար: Ապա, 228 ձայնով 126-ի մերժեց Բէն-Գարգաբուն միջին գերմանական ջրանցքը:

7 օգոստոսի

ԱՐԳՈՒՍ (Իւտալիա): Կէսօրից յետոյ հրդեհ սկսվեց փայտի պահեստի մէջ, Մէյնան փողոցի վրայ: Կրակը աներկակայելի արագութեամբ տարածվեց. մօտ 5 ժամին կատարեալապէս այրվեցին տան և ութ շինութիւններ: Սրկու զինուորների վերադարձից: Վնասը մէկ միլիոնից ավելի է:

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Հակաժամախառնային յանձնաժողովը յայտարարում է. «Օպորտո քաղաքը (Պորտուգալիայում) ժամախառն կողմից անհրաժեշտ է յայտարարված:

ԱՐԳՈՒՍ (Իւտալիա): Երեկոյեան 7 1/2 ժամին հրդեհ չէ գրգռացրած է և երեկ, այլ ես չի տարածվի: Ընդամենը այրվեցին 20 շինութիւններ: Վնասը հաւոււմ են 1 1/2-ից մինչև 2 միլիոն:

ՊԱՐԻՑ: Լազի հրաժարվեց այլ ևս բանակցութիւններ վարել Գլորիի հետ: Այդ գործը յանձն առաւ գեներալ Ժակէ: Նա և Մալ, որպէս ազգային պաշտպանութեան խմբի պատերազմի, խորհրդակցեցին առաջին միլիտար Վալդէ-Բուսսոնի հետ, և գաղտնի են պահում այդ խորհրդակցութեան հետևանքները:

ՊԱՐԻՑ: ՀՀաւասի գործակալութիւնը՝ հաղորդում է Գլորիի գործի առիթով, որ կառավարութիւնը Տէնց սկզբից հրաժարվեց հարցի այնպիսի լուծումից, որպիսին էր յաջանում գործը Եստէրհադի փողոցի տան վրայ կամ թէ գոնով ձեռք գցել Գլորիին, և կառավարութիւնը զեկաւարում է այդ դէպքում մարդկայնութեան զգացմունքներով, չը խօսելով արդէն ուրիշ նկատումների մասին, այդ պատճառով, քանի անհրաժեշտութիւն կը լինի, կը շարունակվեն այն միջոցները, որոնց նպատակն է կարելի արտաքին աշխարհից Գլորիին, և ոչ մի դուստրուներ չեն թող տրվի այդ տան առաջ:

ՊԱՐԻՑ: «Figaro» ասում է, որ ինքը լրագրութիւն ունի ստացած Պարիզի աւստրիական լրագրից յայտնել, որ գնդապետ Շնէյդերի երէկվայ հեռագիրը յիշախ ուղարկել է այդ անձը և ճշմարիտ է:

ԲԵՐԼԻՆ: Զբոսայգի վերաբերեալ նախագիծը մերժելու առիթով, որի համար ինքն կայսրը անհամար աշխատում էր և կամենում էր իրաւորված տեսնել, ներքին քաղաքական դուստրու Պրուսիայում սատիկ լարվեց: «Berl. Neueste Nachrichten» լրագրի բարձր-կիսապաշ-

տօնական յօդուածում ասված է, թէ պահպանողականների ընթացքը մէջ կայսրը անհանգստացնում էր: Պիկարը ասում է, թէ ինչպէս իրաւորները երբեք չեն ընթերցանութիւնից յետոյ էլ մերժվի, անհնայ կուր սկսել պահպանողականների դէմ:

ԲԵՆ: Գնդապետ Պիկար և ուրիշները, որոնք տեսել են Լաբորիի վրա ընկնող արձակող մարդուն, յայտնեցին, որ Գլորի այն անձը չէ:

ԲԵՆ: ՀՀաւասի գործակալութիւնը: Դատարանի նիստը բացվեց 6 ժամ 30 րոպէին առանց միջնադէպքերի: Տուցմունքներ է տալիս Կլորիին: Նա ասում է, թէ երբ գտնվում էր 1893 թվին զինուոր շտաբում, Իրէնքի-ֆուս իր մօտ նշանակված ժամանակ, վերջինս պնդում էր, որ նրան թող տրվի իրականաւոր տեղեկութիւններ Ժողովի երկաթուղու վրա գործը զբաղւելու ներքին հարցի վերաբերմամբ: Իրէնքի-ֆուս արտագրեց շատ տեղեկութիւններ, բայց նրանք չը գտնվեցին նրա բնակարանը խուզարկելու ժամանակ: Կլորիին յայտնում է, որ հաւատացած է Իրէնքի-ֆուսի յանցաւորութեան մէջ: Այդ հաւատը հիմնված է՝ Իրէնքի-ֆուսի խոստովանութիւնների վրայ, բորդերօի, գաղտնի զօկումէնտների, Բէրտիլիոնի ցուցմունքների և այն միջոցների վրայ, որոնց դիմում էր Իրէնքի-ֆուս ընտանիքը, որպէս զի արդարացին նրան: Նա ընկում է այն կէտերը և յայտնում է, թէ բաւական են միմիայն զինուորական գաղտնի dossier-ի մէջ պարունակվող զօկումէնտները Իրէնքի-ֆուսի յանցաւոր ճանաչելու համար: «Այդ ակնյայտի սուտ է», բացակայում է Իրէնքի-ֆուս: Կլորիին բացատրում է այն հիմունքները, որոնցով Իրէնքի-ֆուս կասկածի ենթարկվեց: Խօսելով Շնէյդերի հերքման առիթով, Կլորիին պնդում է, թէ Շնէյդերի նամակի վաւերական լինելու վրայ Վաւերականութիւնը ապացուցանվում է նոյն կցորդի մի ուրիշ զօկումէնտով—գործակալի համար առաջարկած կենացի սեւագրութիւններով, իսկ dossier-ի մէջ մտցած զօկումէնտը ներկայացրվեց զինուորական դատարանին զինուորական միլիտարի անունից: Ուրեմն հերքումը ուղղված է ֆրանսիական կառավարութեան դէմ: (Շարժում): Կլորիին նկատում է, թէ այն կցորդը, որը հանդէս է եկել իր հերքումով, շատ դժուար դրութեան մէջ է գտնվում իր դաշնակիցների վերաբերմամբ. նրան, շատ կարելի է, ստիպել են գրել այդ հերքումը: (Թուլմունք): Կառավարական գործակալ Կարիք յայտնում է, թէ կառավարութեան անունից, նա հրաժարվում է յարել Կլորիինի ցուցմունքներին: Դժմանք նոյնպէս նկատում է, որ այն զօկումէնտը, որը վերաբերում է Շնէյդերին, և որը ներկայացրել է գեներալ Մերսիէ, միմիայն քաղաւած է զօկումէնտից: Իրէնքի-ֆուս ասում է, թէ դիմել է Կլորիին տեղեկութիւնների համար միմիայն իր մեծաւորի հրամանով: Ներս է կանչվում Բուադէֆր: Նա բացատրում է գործի պատմութիւնը և յայտնում է, թէ հաւատում է Լէրէն-Բէնի պատմութեան: Նա պատմում է այն ընտելեան մասին, որը կատարել է Պիկար և որը մեղաւոր է դուրս բերել Էստէրհադիին: Բուադէֆր համոզված էր այն ժամանակակից Իրէնքի-ֆուսի մեղաւորութեան մէջ և այն ժամանակից ի՞նչ համոզմունք չէ փոխել: (Ներքառտե շարժումներ): Նա խօսում է Անրիի կեղծումը բացվելու առիթով, որը իր պաշտօնաթղթի վրայ պատճառ դրած, և հաստատում է Մերսիէի պատմութիւնը: Նրան պաշտոն տեղի ունեցած անցքի մասին: Իրէնքի-ֆուս յայտնում է, թէ նա ոչինչ չունի պատասխանելու Բուադէֆրին:

Նիստը բացվելուն պէս կանչում են գեներալ Գոնդին: Նա յայտնում է, թէ Իրէնքի-ֆուս գործում իր նպատակն է եղել՝ պաշտպանել զօրք յանցաւոր փորձերի դէմ: Նա ասում է, թէ Էստէրհադի երբեք չէ ծառայել խուզարկու բուսում և Սանդգեր նրան երբեք ոչ մի գործ չէ յանձնել: Նա անհայտն է համարում, որ Էստէրհադի կարողանաւ բորդերօն կազմել. դրա համար հարկաւոր էր ունենալ նրա մէջ յիշատակված բոլոր զօկումէնտները, նրա մօտ եղած խուզարկութիւնը ցոյց չը տուեց յափշտակութեան ոչ մի նշան: Վկան շատ ցաւում է, որ 1894 թվի զինուորական դատարանի նիստերը հրապարակական չէին: Գոնդ ընկնում է այն զօկումէնտները, որ ժողովված են Իրէնքի-ֆուսի գործի ընտելութեան համար և հրապարակ է հանում Իրէնքի-ֆուսի բացմամբ: անխոհեմութիւնները Իրէնքի-ֆուսի անունը—ասում է նա—զօկումէնտների մէջ շատ անգամ է պատահում, բայց ոչ մի տեղ խօսք չէ կայ նրա անմեղութեան մասին: Գոնդ հերքում է Պիկարի մեղադրանքը և արդարացնում է Գլորի-Պատիին այն մեղադրանքից, որ իբր թէ նա Էստէրհադիի հետ միասին աշխատել են բորդերօն յորինելու: Իրէնքի-ֆուս խոստովանում է

թեան վերաբերմամբ Գոնդ ցոյց է տալիս նոյնը, ինչ որ Մերսիէ: Նա աւելացնում է միայն, որ Լէրէն-Բէն, երկու կերպով հանրապետութեան նախագահի յանդիմանութիւնից, չը համարձակվեց խօսել խոստովանութեան մասին և պաշտօնագրի անելու վերաբերմամբ բորդը չէ պատմել: Գոնդ ճիշդ չէ համարում Պիկարի ասածը այն յօդուածի մասին, որը նա արտա-յայտել է որպէս թէ յուսկարի 5-ին Միւնստէրի քայլերի պատճառով: Նա իմացաւ այդ քայլերի մասին միմիայն յուսկարի 6-ին, երեկոյեան: Նա Պիկարի ոչ մի գործին չէր միջամտում: Գոնդ յանձնար դիմում էր իր հաստ տետրակին, որից հանում էր իր ցուցմունքները: Պատասխանելով իրան առաջարկած հարցին, նա ասում է, թէ ուղղակի ապացուցներ երբեք չեն եղել այն բանի մասին, թէ բորդերօի մէջ յիշատակված զօկումէնտները ուղարկված են եղել արտասահման: Գոնդ հերքում է Բերտիլիոնի մեղադրանքը Անրիի վերաբերմամբ և խոստովանում է, որ երբ Անրի իրան տուեց կեղծած զօկումէնտը, պնդում էր, որ այդ զօկումէնտը ցոյց չը տրվի Պիկարին: Վկայի և Դէմանի մէջ տեղի են ունենում փոխադարձ նկատողութիւններ: Գոնդ յայտնում է, թէ խորհուրդ էր տալիս Պիկարին չը պարագայ բորդերօի ձեռագրով, այլ բաւականաւոր հաստատելով բորդերօի ձեռքի նմանութիւնը Էստէրհադիի ձեռքի հետ: Իրէնքի-ֆուս յայտնում է, թէ կը պատասխանի անմիջապէս բարոտուարին, որը նրան տեսել է բերքում: Առաւելելով Գոնդին, նա նկատում է, թէ հակառակ նրա խօսքերին, անհայտն է, որ օֆիցերը մի ուրիշ անձի ներս տանէ միլիտարութեան շինութիւնը: Պիկար ապա արդարացնում է իրան այն մեղադրանքներից, որ արել է նրա դէմ Գոնդ, այն բանի մասին, թէ նա, իբր թէ, հրամայել է բանտարկել մի լրտեսի առանց որ և է փաստերի, և ծախսեց մեծ գումարներ Էստէրհադիին հետամտելու համար: Պիկարի և Բիլիօի մէջ տեղի է ունենում մեծ վէճ: Բիլիօ ներկայացնում է փաստեր և բացատրութիւններ իր միմիայն եղած միջոցին գուսմարներ ծախսելու և կարգադրելու առիթով: Նիստը փակված է: Սկսվեց ցրվում են առանց միջնադէպքերի:

Լաբորիի առողջական դրութիւնը շարունակվում է լաւանալ:

ՊԱՐԻՑ: ՀՀաւասի գործակալութիւնը: Եստէրհադի փողոցի դրութիւնը չէ փոխվել: Առաւօտեան խոնդրոնները վերցրին, բայց կէսօրից նորից խիստ միջոցներ ձեռք առնվեցին: Տուեց ջրջապատված է խիստ սակողութեամբ, և Եստէրհադի փողոցը կապված է:

ԲԵՐԼԻՆ: (Սեփական թղթակցից): Պատգամաւորների ժողովը Զբոսայգի վերաբերեալ հարցը վերջնականապէս վճեւելուց առաջ Հոսնիլօէ յայտնեց, թէ ծրագիրը նորից կը վերադարձնվի պատգամաւորների ժողովին և պահպանողականների վարձուցը լուրջ հետևանքներ կունենայ կառավարութեան հետ նրանց ունեցած յարաբերութիւնների վրայ:

ԼՕՆԴՈՆ: (Սեփական թղթակցից): Հարաւային Սֆիրկայում դրութիւնը սուր կերպարանք է ստացել: Կապաւորողը դուրս է եկել դէպի Բուլուվալիօ կամաւորների մի խումը:

8 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՐԳ: «Правительств. Вѣст.» լրագրում հրատարակված է, որ Աստրախանի նահանգի, Ցարեվկայեա դաւառի, Կոջօքովա գիւղում, յուլիս ամսի երկրորդ կէտում, ծանր կերպարանք ունեցող պնէմոնիայի է երևացել, որից մեռել են 21 հոգի: Ձեռք են առնում բժշկական օգնութեան և հիւանդութիւնը կղզիացնելու բոլոր միջոցները:

ԼՕՉ: Այսօր այրվեց Բարիի ակցիոնեական ընկերութեան մեծ գործարանը: Վնասը հասնում է մինչև 150,000 րուբլի:

ԲԵՆ: Լաբորիի առողջական դրութիւնը բաւարար է: Նա վերականգնաւ անկողնից ու կարողացաւ մինչև անգամ աշխատել: Բժշկները կարծում են, որ նա կարող է դուրս գալ երկաւոր ժամ երեքշաբթի օր:

ՑԵՆՏԻՆԷ: Սրէկ, աւստրիական կայսրի ծննդնական օրի առիթով, պաշտում տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշ: Իշխան Նիկոլայ կենաց առաջարկեց, որ մէջ չնորհալուութիւն յայտնեց, աւստրիական կայսրի, զօրեղապետ թագաւորի կողմից իրան ցոյց տուած բարեհաճութիւնների և բարեբարութիւնների համար:

ԲԵՐԼԻՆ: Պատգամաւորների ժողովը երրորդ ընթերցման ժամանակ մերժեց միլիոն-գերմանական ջրանցքի ծրագիրը և նացիոնալ-լիբերալների առաջարկութիւնը՝ վերականգնել կառավարութեան ծրագիրը: Մեծամասնութեան կողմն էին 235, փոքրամասնութեան—147. ձայնաւոր-

Թէ՛հրԱՆԻ ազգային երկսեռ վարժարան-
ների համար հարկաւոր է ՄԻ ՈՒՍՈՒ-
ՑԻՉ. որը պիտի դառաւանդէ գլխաւորա-
պէս հայոց լեզու: Դիմել «Մշակի» խմբ-
ագորութեան: 2—3

Երբորդեալ հայտարարութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիզդեկէի գրա-
վաճառանոցում և Նիկիակի սփո, և Ռուսաստանի ցուրը յայտիկ գրավաճառանոցներում:
Գինն է 3 թ. 50 կոպէկ: Օտարաբարդաբաշխները գրքը գինեւ համար կարող են ղեմէն Նե-
ղիսիանի, առանց պատրի ծախս վճարելու: (9 22) 9—20

M. 75287 (18)